

ԳՐԱԽՈՍՏՈՒԹՅՈՒՆ

«ԳԻՎԱՆ Խ. ԱՐՈՎՅԱՆԻ»

(2-րդ հատոր, Ձրևան, 1948 թ. կազմեց և ծանոթագրեց Ծ. Շահագրգ)

* * *

Արովյանի կյանքի և գործունեության մանրամասնությունների հետ ժանոթանալու տեսակետից հարուստ փաստաթղթերի հազվագյուտ հավաքածուներ պիտի համարել «Գիվան Խ. Արովյանի»-ի աղբյուր հրատարակված երկու հատորները: Դրանցից առաջինը հրատարակի վրա էր դեռ 1940 թվից, իսկ երկրորդը լույս տեսավ վերջերս: Սույն գրախոսականով մենք կանդ կառնենք երկրորդ հատորի վրա:

Այս հատորում գտնվող նյութերը բաժանված են 6 մասի, յուրաքանչյուր բաժնի ներսուսն էլ պահպանված է այդ նյութերի դասավորման ժամանակադրական հաջորդականությունը: Հենց սկզբից նշենք, որ այս սխտեմը չի հարմարեցված ներկայացվող փաստաթղթերի առավել նպատակասլաց ու հեշտ ուսումնասիրությանը. ուստի մենք մեր գրախոսության համար սահմանում ենք ուրիշ կարգ: Այսպես.

Առաջին խմբի փաստաթղթերի մեջ նկատք ունենք այն նյութերը, որոնք վերաբերում են Արովյանի Դորպատ մեկնելու խնդրի լուծմանը: Առաջին փաստաթուղթն այստեղ «ОТКРЫТИИ ЛНСТ» կոչվածն է (էջ 251), որի համաձայն Արովյանն իրավունք է ստանում (1829 թ. դեկտեմբերի 4) գնալ Թիֆլիս և այլուր՝ «Վասն հարկաւոր գործոց իւրոց»: Որոնք էին այդ գործերը: Դրանց մասին պատմում են 208-212 և 232-րդ էջերում գտնվող փաստաթղթերը: Պարրոտը Հայաստանից հեռանալիս՝ Թիֆլիսում դիմում է զինվորական նահանգապետ Ստեփան Ստրեկալովին՝ Արովյանին երկու տարով ուսման ուղարկելու խնդրով: Ստրեկալովին այդ մասին ղեկուցում է Պասկեիչին, Պասկեիչը՝ լուսավորության նախարար Լիվենին, իսկ վերջինս էլ ցարին՝ Արովյանի ուսման ծրագրի որոշ ընդլայնումով: Ցարից ստացվում է դրական պատասխան, որի մասին Լիվենը հայտնում է Պասկեիչին: Այնուհետև հաջոր-

դում են կարգադրություններ, Արովյանին Դորպատ ուղարկելու և դրամով ապահովելու մասին (ճանապարհածախո, թոշակ և այլն): Ինչպես երեւում է, այդ գործն այնքան էլ արագ չի կատարվել. Արովյանը շատ է անհանգստացել և Թիֆլիս մեկնելով, այդ կապակցությամբ դիմել է Ստրեկալովին և Պասկեիչին: Այս փաստաթղթերը քանակով 8 հատ են, որոնցից վեցը հայտաբերված են Կ. Օնիկուպովի «Իշոցով» - բիլիսիի կենտրոնական արխիվում և կարեոր նորություններ են: 210-211 էջերում գտնվող փաստաթղթերից տեղեկանում ենք նաև այն, որ Արովյանը ցանկացել էր գնալ սովորելու «Մոսկվայի կամ Ս. Պետերբուրգի կայսերական համալսարանք», սակայն, ինչպես երեւում է, նպատակահարմար են գտել ուղարկել Դորպատ:

Փաստաթղթերի հաջորդ խումբը գնտեղված է հատորի սկզբում և բառ է ունի կադմում է նախորդ խմբի անմիջական շարունակությունը, դրանք խոսում են Արովյանի հարազատներից անջատվելու և Դորպատում, առաջին ամիսներին, նրա ունեցած հոգեկան ծանր ապրումների մասին: «Մնդուքիւն իմ» բանաստեղծություն-նամակով Արովյանը սիրած աղջկան նկարագրում է իր ջերմագին սերը, բաժանվելու ծանրությունը և բացականը:

«... յնւրոպեան ի ծոցում ոչ ծամ,
Քամ առ բեզ»:

Ուշադրով է այն հատվածը, որ հանված է Արովյանի ճանապարհորդությունից, ուր նա այնքան կենդանի պատկերներով նկարագրում է իր անջատումը ծնողներից, հաեկպես մորից: Մի այլ փաստաթուղթ (14-16) բացում է մեր մտաջ Արովյանի հոգու խոռվածը՝ գորպատյան առաջին ամիսներին, երբ նա, վախենալով դժվարություններից, կասկածում է իր վրա դրված հույսերը և իր տված խոստումները կատարելու վերաբերյալ. սաքսափով հիշում է էջմիածնի հոգևորական-

ներին և մտածում նույնիսկ ինքնասպանութեան մասին: Սակայն Արոճյանցն այնքան քնքուշ սրտի հետ ունեցել է նաև հանուն հայրենիքի բարօրութեան պործելու մի այնպիսի բուռն կարոտ, որի շնորհիվ կարողացել է հաղթահարել բոլոր զժգարութիւնները: Այս տեսակետից հետաքրքրական է 17—20-րդ էջերում գետնգված նամակը (Ն. Աշտարակեցուն), ուր գրում է՝ «տիւ և զիշեր անցաննն շրջին ի միտս իմ ազգի-ազգի մտածմունք բարեկարգութեանց պատկանելոց ազգին... ճխայ և թեալորի սիրտ, երակք իմ պայթին ի խնդութենէ...» ապա շարունակում. «ես ուխտեմ մինչև ցել շնչոյ լինի որդի հպատակ ազգին, կեալ և մեռանիլ իրրև հայկազուն վասն Հայաստանի»: մի սրբազան երգում, որին, իրոք, նվիրեց նա իր կարճատև, բայց այնքան կրակոտ կյանքը:

Փաստաթղթերի մի այլ խումբ վերաբերում է Արոճյանի Պետերբուրգյան օրերին: Ինչպես տեսանք վերևում, Արոճյանը նախապես էլ ցանկացել էր սովորել Պետերբուրգում: Եվ ահա այդ միտքը նրա հետ է նաև Դորպատում: Նրա նպատակն է եղել արժանապես տիրապետել ոուսաց լեզվին. այդ մասին Ն. Աշտարակեցուն գրված վերոհիշյալ նամակում նա ասում է՝ «ի հոկտեմբեր ամսոյ մինչև ցյունվար կամիմ մնալ ի Պետերբուրգ, կամ ի Մոսկով առ ի ուսանիլ կաարելիպէս ոուս [երէն]» (էջ 19):

Դրան համապատասխան էլ 35—37-րդ էջերում կարդում ենք 1835 թվի հունվարի 21-ին գրված նրա մի նամակը Պետերբուրգից: Պետերբուրգյան օրերին են վերաբերում նաև 33—35, 37—39-րդ էջերի նամակները, որոնցից մեկում նա Պետերբուրգի նկարագրութեանն է նվիրել այսպիսի տողեր «ապշում ես, երբ շուրջդ ես նայում. բավական է միայն որևէ տեղ կանգնել Նևսկի պրոսպեկտում, և առաջ ծով է բացվում: Ամեն ինչ ալիքածև ետ ու առաջ է սեղմվում ու հասում: Այդ կյանքը շունի իր նմանը...» (38):

Առանձնահատուկ ուշադրութեան են արժանի այն փաստաթղթերը, որոնք զբնկրում են Արոճյանի մարտնչոգ ու ազատատենչ հոգին: Նա ամենայն դաժանութեամբ խոյանում է մերթ հոգևոր հայրերի, մերթ հարուստների, մերթ պետական ծառայողների և այլ նման մարդկանց դեմ, որոնք, ամեն քայլափոխի, ոտնահարում են ժողովրդի և հայրենիքի շահերը, ազատութեան և լուսավորութեան զաղափարները: Ահա նա Դորպատում ցանկանում է տպագիր մամուլի միջոցով խարազանել այնպիսի սև ուժերի, ինչպիսիք

էին Հովսեփ վարդապետ Մարուդյանը և ուրիշները. սակայն փորձառու և ծերունի Միքայել Սալլանթյանը խորհուրդ է տալիս՝ առ ժամանակ լռել, որովհետև օտար մամուլն անսրտացավ է, իսկ խարաղանվող անձինք, կաշառքի և խարդախութիւնների միջոցով այնքան հզոր, որ ի վերջո կարող են իրեն, Արոճյանին ջնասել. «մի՞թէ այդպիսի սին պարտաբարիւ այնպիսի Գողիաթ անկանիցի, և ոչ բնաւ, այլ առաւելապէս շարասցի և շարչարեսցէ զքեզ և զկուսակիցս քո», խրատում է Սալլանթյանը՝ Մոսկովայից, հորդորելով՝ հաստատ մնալ այդ պայքարին՝ հետագայում (92—98):

Արոճյանի ատելութիւնը դեպի հոգևոր զաղանները արտացոլված է նաև հատկապես նրա մանկութեան ընկերներ Առաքել Արարատյանի և Մսեր Մսերյանի նամակներում: Վերջիններս, ի բավարարութիւն Արոճյանի հետաքրքրութեան և ի հանգստութիւն իրենց բորբոքված սրտի, գրում են Արոճյանին. «հաշակեր շիկամաղ վարդապետն Ստեփ. որ առ Ներսէս սրբաղանին, յաւուրս յայսոսիկ եմուտ ի քաղաքս... զվայրահաջ անաստուած ապերախտութեանցն, զբողացեալ շարժմանցն՝ զվարուցն և զգնացիցն աւարտեալ գհանդէս... յափշտակեցաւ ի դիւաց յէջմիածին օծիլ և ինքն զեպիսկոպոս: Աստուած փշրեսցէ մարդահաճոյից, Աստուած առաքեսցէ նմա զջերմ և զզոզ և մահուամբ դառնագոյն լուծցէ զվրէժ անիծեալ շարարմատին» (էջ 119):

Այդ ատելութիւնն Արոճյանի մոտ հետզհետէ ազդելի է խորացել. գործն այնտեղ է հասել, որ էջմիածնի Սինոդի դատախազի պաշտոնակատարը նրա մասին բողոքադիր է ներկայացրել Անդրկովկասի քաղաքական մասի պետ գեներալ լեյտենանտ և ասպետ Գուրկոյին. «եթե այդ համառ մարդը փոխադրված չլինի Երևանից մի ուրիշ դպրոց, դա, ապրելով խաչմերուկ ճամբի վրա, կարող է շատ հաճախ մեր հոգևորականութեանը ենթարկել այդպիսի կացութեան» (279):

Հիշենք նաև Ներսես Աշտարակեցուն ուղղրված այն գրութիւնը, որի մեջ Արոճյանն, անզուսպ պոռթկումով, անարգանքի սյունին է գամում ինչպես կաթողիկոսին, նույնպես էջմիածնական կենտրոնը, ապականված բարքերը, չկաշառակերութիւնը, զրպարտութեանները, կեղծիքը և այլն և այլն (48—50):

Արոճյանի դեպի ժողովրդի մյուս թշնամիներն ունեցած ատելութիւնը ցայտուն կերպով զբնկրված է Աստախան գյուղի բնակիչների համար նրա գրած դիմումի մեջ: Ելք փնտռելով իրենց ճորտային զբնութիւն-

նից, այդ գյուղացիների ներկայացուցիչները, հավանաբար Քիֆլիս հասնելով, փնտռում են Արովյանին և ձեռնկերպել տալիս իրենց զիմումը՝ նույն գյուղի կառավարիչ Ղազարի գեմ: Այդ զիմումն այնքան հստակ ու մեկին է շարադրել աստիճանայինների կրած ծեծը, թալանը, բռնի ամուսնութիւնը, հարկահանութիւնը, կոռւք և այլ բարբարոսութիւնները, որ պարզ երևում է թե ինչպիսի սքանչելիութիւն է նրա հեղինակը գրել՝ ամեն ինչի մասին հետաքրքրելով: Դա ոչ միայն աստիճանայինների, այլև իրեն, Արովյանի բողոքն է: Այդպիսի բողոք է նաև Ն. Նախիջիվանի հոգևոր գատարանին ուղղված մի ազնկա զիմում՝ ընդգեմ բռնի ամուսնութիւն, հանուն ազատ սիրո (12):

Ժամանակի անվանի հայ հարուստներին է քննադատել Արովյանը՝ Ներսիսյան դպրոցում ունեցած իր մի կրակոտ ելույթի մեջ, նրանց փառամոլ աստիճանային ու գրամաշարութիւնը հակադրելով իրեն, որպես ժողովրդի անկաշառ բարեկամի: Ուշագրավ փաստաթուղթ է նաև Արովյանի օրագրից հանված այն մասը, ուր նա նկարագրում է ընդհարումը «Սեփերնայա պլյուս» թերթի խմբագիր, ցարական 3-րդ բաժանմունքի գաղտնի գործակալ Բուլղարինի հետ, որը թիչ չէ թունավորել նաև Ա. Ս. Գուշկինի կյանքը:

Հայրենի երկրի ազատութիւն և լուսավորութիւն գաղափարներին նվիրված Արովյանը միակն էր իր ժամանակակիցներից, որ այնքան մեծ տեղ էր հատկացնում կրթութիւն գործին. նա ոչ միայն ինքը ձգտեց հասնել հնարավոր բարձրագույնին՝ այդ բնագավառում, այլև ջանք շխնայեց, որպեսզի օգնի և ուրիշներին: Հայտնի է նրա դերը հայ ազնավոր գործիչ Սա. Նազարյանի կատարելագործման մեկնելու խնդրում: Այս տեսակետից ևս բավական նոր ավյալներ կան սույն հատորում: Սակայն առավել ուշագրավը նկարիչ Սա. Ներսիսյանի կրթութիւն գործի պատմութիւնն է: Գետերբուրգում եղած օրերին Արովյանը տեղեկանում է այնտեղ գտնվող ապագա նկարչի մասին, փրճատում, գտնում է նրան՝ անմիջապէս պայմանների մեջ և ամեն կերպ ձգտում նրան կանոնավոր ուսման տալու: «Ըստ ինձ կծախեի, — գրում է նա, — եթէ գրանով կարողանայի օգնել նրան սրէէ կերպ... հանգստութիւնս կորել է»: Ահա Արզգոյանի սիրտը: Ի վերջո նրան հաջողվում է տեղավորել Սա. Ներսիսյանին գեղարվեստ. Ակադեմիան, ուր և սովորում է վերջինս և ավարտում շեռագայում Արովյանը, որպես ուսուցիչ, նվիրվում է լուսավորութիւն գործին, առավել ևս մեծ Տեղեկագիր 7—8

հնարավորութիւններ է ունենում պայթարելու այդ նպատակի համար, այդ են ապացուցում այն փաստաթղթերը, որոնք ցույց են տալիս, ինչպես Արովյանն իր լավագույն աշակերտներին և ուրիշ ընդունակ պատանիների օգնում էր՝ մեկնել Քիֆլիս, Մոսկվա, Գետերբուրգ և այլուր՝ բարձր կրթութիւն: Դա մի կարևոր գործ էր, որը չպիտի չփոթել ընդհանուր տարրական կրթութիւն գործի հետ. դա այս վերջինի համար կարող ուժեր, որակյալ կադրեր պատրաստելու գործն էր, որին այնքան մեծ ուշադրութիւն էր հատկացնում մեծ ու հեռատես լուսավորիչը:

Առանձին խումբ են կազմում այն գրագրութիւններն ու նամակները, որոնք առընչված են Արովյանի և իր աշակերտների հետ: Գրանց մեջ ցույց է տրված այն անսահման սերը, որ եղել է նրանց միջև: Որքան պերճախոս են, ասենք, հետևյալ տողերը. «Արտատուք հեղանին յաշաց իմոց, երբ ոչ ասանեմ Ձեզ», գրում է նրա աշակերտներից մեկը՝ Գ. Շարոյանը: «Ձեր բաժանումը մեզանից անտանելի էր, որովհետև մեզանից հեռացավ մեր լավագույն բնկերներից մեկը» գրում է նրա փոքրահասակ աշակերտ Գ. Խատիսյանը: Ահա թե ինչպիսին էր Արովյան — ուսուցիչը: Նա մտերմական սերտ կապ է ունեցել, աշակերտներից բացի, նաև նրանց ծնողների հետ. այդ են ապացուցում ապագրված բազմաթիվ նամակները, հիշենք զրանցից Մարտիրոս Գուլջանյանի (181), Գրիգոր Գյանջիկի (183), Որոմոն Ակիմյանի (183), Իվան Շանշիկի (186), Տ. Բեկլարյանի (171), Գրիգոր Ամբարզանյանի (173) և այլոց նամակները, ուր գրեւորված են նամակագիրների ոչ միայն սերն ու հարգանքը, այլև այն մտերմութիւնը, որի շնորհիվ հաճախ գանազան ցանկութիւններ են հայտնել նրանք: Արովյանը սիրով է ընդառաջել այդ ցանկութիւններին և, վերագաս օրգաններին զիմելով, նշել, որ ինքը «համակիր» է «հասարակութիւն այդպիսի ցանկութիւնց»: Եվ հիշումի, իրավունք ունեւ Արովյանն իր «ղեկսւյց»-ներից մեկում հպարտութիւնով նշելու. «Ըստ ձեռք եմ բերել տեղիս բնակիչների վստահութիւնը» (236):

Արովյանն առաջին իրարմեք ուսուցչի տիպարն է եղել մեր իրականութիւն մեջ. նրա աշակերտներից շատերը ձգտել են նմանվել իրենց ուսուցչին, և նրա կենդանի օրինակը մեծ դեր է խաղացել հաջողների համար:

1 Հավանաբար՝ Շամշի Մելքոյի հաջորդներից:

Մի ստվար խումբ կարող են կազմել այն նամակներն ու գրութիւնները, որոնք ցրիվ են եկած ողջ հատորով մեկ ե ուղղված են բաղմաթիվ անձանց, կամ նրանցից՝ Արովյանին: Այդտեղ ավելի է լրացվում Արովյան-գրագետը, Արովյան-քաղաքացին, Արովյան-մտածողը, Արովյան-ընկերը և վերջապես Արովյան-մարզը: Գրանց մի մասը ցույց է տալիս Արովյանի և իր զասախոսներին, ուսուցիչներին և ժամանակի գիտնականներից ոմանց հարաբերութիւնները: Այստեղ նկատի ունենք Պարրոտի, Գրասի, Կոլրաուֆերաժտի, Տարրոբէի, Աղելունգի, Ֆրենի, Արիի, Սալլանթյանի, Ալամգարյանի և այլոց նամակներն ու պատասխանները: Այդ նամակներին մի ուրիշ մասը ցույց է տալիս Արովյանի և իր ընկերների՝ Առաքել Արարտայանի, Մ. Մսերյանի, Աղ. Շիրմաղանյանի, Ա. Սմբատյանի, եղբայրներ Ավթանդիլյանների և այլոց մտերիմ կապերը:

Այդ նամակներից բացի, ուշադրով են նաև այն մեծաքանակ նամակները, որոնք իրենց բազմազանութան մեջ մի առանձին հետաքրքրութիւն են պարունակում: Այսպես օրինակ, ոմն Պրոխորով Մոսկվայից նվեր է ուղարկել Արովյանին իր «գործած կտորներից» և խնդրել չմոռանալ իր (հավանաբար կտորեղենի տարածման կապակցութեամբ) արված հանձնարարութիւնները (144): Մի այլ նամակից տեսնում ենք Արովյանի կապը Պետերբուրգի գրախանութներից մեկի գործակատարի հետ (167—168): 178—179-րդ էջերից երևում է Արովյանի կապը զավալեցի ձիապան «պօզ պորուչիկ» Մինաս-Սուլթան Առաքելյանցի հետ: Շիխովսկու նամակներից երևում է, որ Արովյանը եղել է Մոսկվայի բնախույզների Պայսերական ընկերութեան անդամ, հանձնարարութիւններ է ունեցել բուսական սերմեր ուղարկելու, եղել է Այգեգործական ընկերութեան անդամ-թղթակից: 100-րդ էջից տեղեկանում ենք «Մահ-Արելի» պիեսի տպագրութեան հետ կապված նրա միջամտութեան մասին և այլն և այլն:

Այս բոլորը ցույց են տալիս, թե ինչպես իր ժամանակի ամենաառաջավոր հայ գործիչը բաղմաթիվ թելերով կապված էր կյանքի բոլոր բնագավառների հետ: Նա չէր սահմանափակված իր աշխատանքի նեղ շրջագծով. նա ապրում ու շնչում էր ոչ միայն Հայաստանի ու Վրաստանի, այլև Ռուսաստանի կյանքով:

Ի վերջո կան մի շարք փաստաթղթեր էլ, որոնք զալիս են մասամբ լրացնելու նրա կյանքի վերջին տարիներին վերաբերող պա-

կասավոր տվյալների շարքը՝ Հիշենք այն գրութիւնները, որոնք վերաբերում են Մասի գաղաթը բարձրանալու կապակցութեամբ տեղի ունեցած գրադին և վեճերին, Հարութիւն Արովյանի դեռ 1850 թ. կենդանի լինելուն, Սինոզե՝ Արովյանից դժգոհ լինելուն և այլն:

Այստեղ առանձնապես պիտի մատնանը-շել 85—87-րդ էջերում գտնվող մի նամակը՝ գրված Արովյանի կողմից իր մտերիմ աշակերտ Գ. Շահնաղարյանին: Այդ նամակի մեջ է, որ Արովյանը յուր սիրելիյան սարսափները կապում է կոնկրետ անձնավորութեան հետ. «Մանգինովի ասած խոսքերը միտդ բեր ու իմացիր, թէ որ էնպէս Հուգա էի դառել... կարծում էի ամեն սհաթ թէ Սիրելին է իմ վերջը. Սիրելի մարդու աչքի առաջին ունենալիս, էլ սե՛ր կգա միտքը. յա սիրելի, յա որդի...»: Այս Մանգինովը եղել է Թիֆլիսի հարուստներից մեկը: Արովյանն այդ նամակում ուրիշ անուններ է տալիս, դժգոհելով նրանց՝ իր նկատմամբ արած շարախոսութիւններից: Թե այս նամակը և թե սինոզի նշված գրութիւնները, թե իր՝ Արովյանի նամակ-բողոքը՝ Ն. Աշտարակեցու դեմ, թե նրա Երևանի դպրոցից աղատվելու մասին 1848 թվի եղած գրադրութիւնները, թե Արովյանի դժգոհութիւնները՝ մյուս նամակներում, մի անգամ ևս, այս հատորի շնորհիվ ցույց են տալիս, թե ինչպես ժամանակի խավար ուժերը՝ չկարողանալով հաշտվել 19-րդ դարի ամենալուսավոր մտավորականի և գործչի հետ, նախապատրաստում էին նրա վաղաժամ և ողբերգական մահը: Սակայն կյանքին ու Հայրենիքին այնքան ջերմորեն փարված լուսավորիչը չմեռավ և մի՛շտ կենդանի թնաց իր ժամանակակիցների և հաջորդների հիշողութեան մեջ: Թեկուզ որոնումները դիակ ու ոսկրեր գտան, թեկուզ Հրազդանի ավիճերում ոմանք փնտոսեցին նրան, բայց ժողովուրդը այլ կերպ պատկերացրեց իր հալածական որդուն: Այս տեսակետից խիստ սրտահույզ են Արովյանի աշակերտներից մեկի նամակի այն տողերը, ուր Արովյանը կորստից հետո մերթ պատկերացվում է որպես աղքատ-թափառիկ՝ Գանձակում, մերթ՝ Ղարսում, մերթ էլ ինչպես ասել է մեկը. «Ակըռի մի քարի վրա նստած լաց ա ըլում, հաց են տարել կեղղցիքը, շի առել...» (268):

1 Այս մասին այլ փաստերով տես Հրաչյա Բոչար — «Գրականութիւն և կյանք», էջ 121—126:

* * *

Այս էր մտաւորապէս «Դիվանի» երկրորդ հատորի բովանդակութիւնը. մտաւորապէս ենք առում, որովհետեւ լրիճն ասած լինելու համար անհրաժեշտ էր մեկ առ մեկ քննել բոլոր փաստաթղթերը, մի բան, որ գրախոսութեան մեջ անհնար է:

Մինչև այստեղ մենք շեշտեցինք հատորի ամենաէական արժանիքները, որոնք լուսաբանում էին Արոզյանի կյանքն ու գեմբը: Այս նպատակն է հետապնդել նաև հրատարակչութիւնը: Սակայն սույն հատորը (ինչպէս և նախորդը) ունի մի ուրիշ արժանիք էլ: Ըր բովանդակած հարուստ փաստաթղթերով հնարավոր է գարձնում ճանաչել նաև Արոզյանի հետ կապված մի շարք այնպիսի անձանց, որոնց ով լինելը մինչև օրս անծանոթ է մտացել թե գրականագետներին և թե սույն հատորը հրատարակողներին: Այստեղ առաջին հերթին ցանկանում ենք կանգ առնել Ազաթոն Սմբատյանի վրա: Այն ժամանակ, երբ Արոզյանին ամեն քայլափոխի կշտամբում և գատապարտում էին՝ նոր գրականութեան ստեղծման պատեհով, հազվագյուտ էին խրախուսողները: Մինչ այն ժամանակ գիտակից և անկեղծ խրախուսանքը խիստ վճռական դեր կարող էր խաղալ: Ահա այդպիսին է եղել Ազաթոն Սմբատյանը՝ Արոզյանի ամենախոշոր երկի՝ «Վերք Հայաստանի»-ի հորինման հենց առաջին պահին: «Մեկ երես բան դեռ չէի գրել, որ իմ մանկական սիրելի բարեկամ ու ազնիվ հայազգի պարոն գոհտոր Ազաթոն Սմբատյանը ներս մտավ», գրում է Արոզյանը «Վերք»-ի նախաբանում և ապա նկարագրում այն ցնցող ոգեկորութիւնը, որ ստացել է նրանից: Այդ ոգեկորութեամբ հենց նույն գիշերն Արոզյանը գրում է 30 «Թարազ»: Մինչև հիմա էլ անհայտ է Արոզյանի և մեր նոր գրականութեան այդ մեծ բարեկամի ով լինելը: Ծանազիզն այս հատորում կարծում է, որ այդ Ազաթոն Սմբատյանը՝ նույն Սմբատոֆն է, որի մասին Արոզյանն իր մի նամակում՝ ուղղված ներսես Աշտարակեցուն՝ գրել է. «Ի հանդիսի հարցափորձութեան ի Ձերդ ուսումնարանի, այն ինչ պարոն Սմբատով խնդամտեալ ի վերայ ստանաւորի իմոյ շերտ լիցի տիրացու Պաշտտարն եպիսկոպոս քաղաքին մերոյ...» և այլն: Այստեղից երևում է, որ այդ Սմբատովը հիշված Սմբատյանը չէ, որովհետեւ այն ժամանակ (1826 թ.) այդ Սմբատովը արդեն հասակավոր և բարձրաստիճան անձ է եղել, ն. Աշտարակեցու հետ խոսել է մեծավայել և մտերջաբար, մինչ Ազաթոն Սմբատյանը Արոզյանի

նի մանկութեան ընկերներից է եղել: Բացի այդ, մեկը կոչվում է Սմբատյան, իսկ մյուսը Սմբատով, վերջինս դոկտոր չէ զարգանալու անունն էլ անհայտ է: Մենք այս կարծիքը համարում ենք ոչ ճիշտ, շնայած այն կրկնրված է նաև «Վերք Հայաստան»-ի վերջին հրատարակութեան մեջ՝ որպէս հազանական կարծիք: Դրան հակառակ, մենք, օգտվելով հենց նույն «Դիվան»-ի 2-րդ հատորի սբոշ փաստաթղթերից, այժմ ցույց կտանք իսկական Ազաթոն Սմբատյանին: Ինչպէս տեսանք վերեւում՝ Արոզյանն արդեն նրա մասին սբոշ տվյալներ տալիս է, այսպէս՝ անունը, ազգանունը, բժշկական մասնագիտութիւնը և իր մանկութեան ընկեր լինելը: Հաջորդ կարևոր տվյալները քաղում ենք Արոզյանի մանկութեան (պարոցական) մյուս ընկերոջ՝ Աղաջան Շիրմազանյանի մի նամակից: Այդ նամակը գրված է 1833 թվի օկտեմբերի 18-ին Քիշնեից, ուր նա գրում է «... յանցեալ ամի ի Մոսկով յամոյանն հոկտեմբերի լուսյ ի վաղածանօթ սրտակից բարեկամէ Ազաթոն Սմբատեանց, թէ Ստեփան Նազարեանցն եկն աստ և զնաց ի Դերպտ»... Այստեղից տեղեկանում ենք, նախ, որ Ազաթոն Սմբատյանը ոչ միայն Արոզյանի ընկերներից է եղել, այլև Աղ. Շիրմազանյանի և Ստ. Նազարյանի Դա հիմք է տալիս հաստատ համոզվելու, որ նրանք բոլորն էլ Թիֆլիսում միասին են ուղևորել: Այս՝ այն ենք տեղեկանում, որ 1832 թվի հոկտեմբերին Մոսկովայով անցնող Շիրմազանյանը հանդիպել է այնտեղ ապրող Ազաթոն Սմբատյանին, որը հայտնել է նրան Ստ. Նազարյանի Դորպտ գնալու մասին: Նույն Ազաթոն Սմբատյանի մասին 1831 թվին Արոզյանին գրել է նաև Առ. Արաբատյանը՝ հակադրելով նրան «Արջաբարոյ» Աղաջան Շիրմազանյանին և խնդրելով «զԱզաթոն Սմբատեանց ի տախտակէ բարեկամութեան մի քերեր...»: Սա ևս մի նոր ապացույց է, որ Ազաթոն Սմբատյանը Արոզյանի, Արաբատյանի, Շիրմազանյանի, Նազարյանի Թիֆլիսյան զասընկերներից է եղել, որը հետագայում մեկնել է Մոսկովա, և ստացել բժշկական կրթութիւնը:

Այս բոլորին համապատասխան, գրախոսվող հատորի 84 և 123-րդ էջերում, հանդիպում ենք երկու նամակի, երկուսն էլ գրված են Մոսկովայից, մեկը 1830, մյուսը՝ 1832 թվին: Դրանց հեղինակը Արոզյանի նախկին զասընկերներից է, որ այդ ժամանակ Մոսկովայում բժշկական կրթութիւն է ձեռք բերում և ջերմազին կարտոսով հիշում Արոզյանին: «Մի ի թարեա գիս, աղաչեմ, քոյդ ընկերսէր բա՛նիւք, յիշեցո քոյդ Բզթազրու»

Թեամբ զանցելոց ամաց եռանգագին սիրոյ մինչ ցարդ անմասնալուսոյ. զրեա՛ զամենայն հանգամանաց քոց, թէ զիարդ կեան, յառաչազէ՛մ ես, սիրելի՛ ես Պարբոտի ե այլն և այլն: Եթե այստեղ նամակագիրը հիշում է միայն Արովյանին, ապա մյուս տողերում հիշում է նաեւ մյուսներին. «Սիրելիքն մեր Առաքել առնէ ընդ իս զգրութիւն ե զարմանայ ընդ կամակար լուսութիւնդ... լուսոյ զգալըստենէ Գ. Նազարովի ի կողմանս յայգոսիկ ե ցաւեցայ յոյժ յոյժ, զի շեղե ինձ զէպ տեսնել զգա ի Մոսկովոյ: Այս նամակներ ի հեղինակն է Աղաբեկ Սմբատյանը: Որ այդ Աղաբեկը նույն Աղաֆոնն է՝ զա կասկածից զուրս է բոլոր վերահիշյալ փաստերի հիման վրա: Իսկ Աղաֆոնն ձեռ Աղաբեկ անվան ուսուսկանացված փաղաքշական ձեռն է՝ ճիշտ այնպես, ինչպես Քաշատուր Արովյանի համար, մյուսներ ի կողմից, այնքան հաճախ զործածվող Խրիստաֆոր ձեռ: Այս նույնութիւնն ապացուցող մի հգոր փաստն էլ հեռեայն է. ինչպես տեսանք, 1832 թվի հոկտեմբերին Մոսկովայում Աղ. Շիրմազանյանը պատահել է Աղաֆոնն Սմբատյանին: Հենց այդ նույն 1832 թվի հոկտեմբերի 8-ին էլ Մոսկովայից զրվել է Աղաբեկ Սմբատյանի նամակներէից մեկը:

Ահա այս Աղաֆոնն կամ Աղաբեկ Սմբատյանն է, որ Մոսկովայում բժշկական կրթութիւն ստանալուց հետո, վերագառնում է Քիֆլիս ե մի երջանիկ օր բախտ ունենում լսել «Վերք Հայաստանի»-ի առաջին ընթերցումը և այնքան ջերմորեն խրախուսել այն: Իրեն, վաստակավոր գիտնական Ծ. Շահագիրին էլ զրավել են այս բոլոր վկայութիւնները, բայց ցավոք որտի նա անջատել է Աղաֆոնն Սմբատյանին՝ Աղաբեկ Սմբատյանից և նույնացրել պարոն Սմբատյանի հետ: Այդ անջատումը նա չի կատարել գիտմամբ, այլ ինքնաբերաբար, որովհետև հենց սկզբից նրա ուղադրութիւնը զրավել է պարոն Սմբատովը, որն առավելագույն գեղարու կարող է Աղաֆոնն Սմբատյանի հայրը կամ այլ մերձավորը լինել:

Հաջորդ անձնավորութիւնը, որի մասին ուզում ենք խոսել, Սաշատուր Առվանյանն է, Հատորում գետեզված է ուսն անձնավորութիւն մի ջերմ շնորհակալական նամակը՝ Արովյանին, ի զիմաց մի մեծ բարեբարութիւն, որի համար Առվանյանը երախտագիտութիւն խոսքեր չի գտնում: «Այս Առվանյանի մասին, թե ով և ինչ է եղել նա, մենք տեղեկութիւն չունենք, բայց երևում է, որ զա էլ Ներսիսյան զպրոցի աշակերտներից է եղել. Արովյանի ընկերը և բարեկամ, ծանո-

թագրում է Ծ. Շահագիրը: Մեզ ծանոթ է այս Առվանյանը. նա շնայած եղել է Ներսիսյան զպրոցի աշակերտներից, բայց Արովյանի հասակակիցը չի եղել: 1841 թվին նա գեոտովորելիս է եղել Ներսիսյան զպրոցում, որից հետո առժամանակ պաշտոնավարել է այնտեղ: Այդ Առվանյանի մասին որոշ կենսագրական տեղեկութիւններ տալիս է Աղ. Երիցյանը՝ Ներսիսյան զպրոցի պատմութիւն մեջ: Սակայն նրա հետ կապված կարևոր թղթեր գտանք Մատենագարանի նո Թ129 ձեռագրում: Դրանք արձակ և շափածո բանաստեղծութիւններ են՝ ողված ջերմ հայրենասիրութիւն, ուստասիրութիւն ե սոցիալական բնագծված շեշտով: Հայրենասիրութիւն մասին գրում է. «Ջգացողութիւնս այս այժմ գտուծայ զերէ գիս... Յ՛յ, այս սէրն հաստատեաց զմեծութիւն եվ զկատողութիւն կայսերութեան Ռուսաց: Հայրենասիրութիւն ստիպեաց զՌուս ի ժամանակի բուսաբուսեան ի 1612 եւ ի 1812 ամս Տաճկ ի սերուց հայրենեաց զստացվանս, զգերգաստանս եւ զկեանս... Պարծեցումք ռուսաստանեացի ազնուական պարծանոք...» Իր բանաստեղծութիւնների մեջ նա նկարագրում է իր թշվառ ու աղքատ վիճակը.

1. Յաչաց իմոց թօթափի
 արդ արտօսը աղի,
 Որպէս յամպոյ շիթ անձրեաց
 խոշոր մազի...»

Այսպես է խոսում նա Քոստ հետ, խնդրելով նրան.

«Դու, գետիկ, անուշ ընկերիկ,
 Հուր միայն իմ այս մայրիկ,
 Հուս գաշս իմ վտակօք,
 Ջրեդ տեսից պարզ աչօք»:

Եթե տխուր է այստեղ Առվանյանի մայրը, ապա այն՝ զարմանալի խրոխտ և մարտական է «Աղքատութիւն» կոչվող աշխարհաբար բանաստեղծութիւն մեջ: Այդ բանաստեղծութիւնը հորինված է նույն օրերին, երբ գրել է իր նամակն Արովյանին: Անշուշտ Արովյանը ծանոթ էր Առվանյան բանաստեղծին, զնահատում էր նրա շնորհքը, ուստի և օգնում նրան տեղութիւն և հուսահատութիւն պահին:

Քաշատուր Մարդանյանն է հաջորդ անձնավորութիւնը, որից ուսն հատորում կա մի նամակ և որի մասին նույնպես հրատարակութիւնը տեղեկութիւններ համարյա չունի: Այս Քաշատուրն էլ իր ժամանակի բանաստեղծներից մեկն է եղել: Գ. Արվերգյանի զավթարում պահպանված են նրա աշխարհաբար այուղական երկու գեղեցիկ բանաստեղ-

ծաւթյուններ, զրգած ճաշակով և բազմակն վար-
 աետարենն՝ Սուլյն Պաշտարանից մի բանաստեղ-
 ծաւթյուն էլ գտնվում է Հայկական ՍՍՌ Գիտ-
 Ակադ. Մ. Արեգյանի անվան Գրակ. Ինստի-
 տուտի վերջերս ձեռք բերած մի ձեռագրում
 և զրգած է 1880 թվին՝ Հակոբ Կարենյանի
 ամուսնուծթյան հանդեսին: Այդտեղից երևում
 է, որ նա եղել է Աստրախանցի:

* * *

Սուլյն հատորի նյութերը արխիվային
 փաստաթղթերի միջից ջազել, ուսումնասիրել
 և պատրաստել է հրատարակութան վաստա-
 կավոր Արոզյանագետ Ծ. Շահազիզը: Նա աշ-
 խատել է հնարավորին շափ լրիվ ընդգրկել
 եղած նյութերը, որի լավագույն ապացույցն
 է այդ հատորում տեղ գտած փաստաթղթերի
 այն խումբը, որ ձեռք է բերված Քրիլի-Իրիցի:
 Նրկար ժամանակ զբաղվելով Արոզյանի կյան-
 քի ու կենսագրութան խնդիրներով, Ծ. Շահ-
 աղիզը կարողացել է ապագրվող փաստաթղ-
 թերին կցել պատմագիտական մի շարք ծա-
 նոթագրութիւններ, որոնք տալով գյուրին
 են զարձնում այդ փաստաթղթերի ուսում-
 նասիրութիւնը:

Բազմաթիվ փաստաթղթեր, որոնց բնա-
 գրերը զրգած են գերմաներեն, ներկայաց-
 ված են այտակ հայերեն թարգմանութամբ.
 որը ծանր, բայց խիստ օգտակար աշխատանք
 է: Թարգմանված են նաև մի շարք զբառար-
 գրութիւններ. դա նույնպես հատորի արժա-
 նեղներն է:

Այսուամենայնիվ նկատվում են մի շարք
 թերութիւններ, որոնք որոշ չափով իջեց-
 նում են սուլյն հատորի գիտական արժանիք-
 ները: Առաջին հերթին մենք պիտի նշենք
 եղած նյութերի գառավորման սխտեմը: Այդ
 սխտեմը կրում է ձեզակամ բնույթ և չի
 բխում նրանց լուրջութիւնից: Բազմակն կլինի
 նայել միայն ցանկը. «Պ. Արոզյանի նամակ-
 ները և թղթերը» «Պ. Արոզյանին գրած
 նամակները...», «Պ. Արոզյանի վերաբերյալ
 նամակներ, թղթեր և այլ վավերականներ»: Այս
 սխտեմը օգտակար է միայն արխիվային
 աշխատանքների համար. սակայն հրատարակ-
 ման ժամանակ՝ ոչ Սուլյն, ինչպես և նա-
 խորդ հատորի նպատակն է եղել ոչ միայն
 ցույց տալ, թե ինչ կա Արոզյանի արխիվում,
 այլև գրանց միջոցով, որպես ամենապայծառ
 վկայութիւնների, ներկայացնել Արոզյանի
 կյանքը: Այս երկրորդ և ըստ էութան առաջ-
 նային նպատակագրումը մղված է ետին
 պլանի վրա, ուստի և այդ հրատարակութիւ-
 նը զարձնել է որոշ ասուումով Արոզյանի ար-

խիվի մեխանիկական տեղափոխում՝ տպագրու-
 րյան մեջ: Մինչ, գրան հակառակ, հարկավոր
 էր գտնել այն օրգանական կապը, որ կար
 այդ փաստաթղթերի մեջ և այնպես գառավո-
 րել նրանց, որ յուրաքանչյուր բաժին բիեր
 նախորդից և պայմանավորեր հաջորդի ան-
 հրաժեշտութիւնը: Այդպիսով, այդ հատոր-
 ներն, ըստ էութան, կգառնային Արոզյանին
 նվիրված պատմականագրական երկեր՝ որոնց
 բոլոր բաժինների միջով կանցնէր Արոզյանն
 այն հզգրիտ ընթացքով, որով անցել է նա
 իր կյանքի հանապարհը: Դա ոչ միայն ավե-
 լի հատակ ցույց կտար Արոզյանի դեմքը, այլև
 ավելի գյուրին կգարձներ ուսումնասիրողնե-
 րի գործը: Բերենք մի օրինակ. կա մի բա-
 ժին «պաշտոնական գրագրութիւն Պ. Արո-
 ղյանին ուսանելու ուղարկելու մասին»: Այդ-
 տեղ գետեղված են միայն այն 6 փաստա-
 թղթերը, որ ստացվել են Քրիլի-Իրիցի: Այդ
 բաժնից զուրս են թողնված այդ բաժնին
 վերաբերող մի քանի այլ փաստաթղթեր
 («Открытыя листы էջ 251, Честь имею...»
 էջ՝ 252 և այլն): Գրանք բոլորն էլ պաշտո-
 նական թղթեր են, բոլորն էլ՝ Արոզյանին
 ուսման ուղարկելու գործի հետ կապված, սա-
 կայն այնպես են ցրիվ եկած հատորի մեջ,
 որ զժվար են գտնվում և այն էլ երկար որո-
 նումներից հետո: Ըստ էութան այդ բաժ-
 նում պիտի գետեղվէին նաև «Ձեռագրիւն
 իմ» նամակը և այլ նման գրութիւնները.
 այդ՞գեպէսում հարկ կլինէր բաժնի խորագի-
 րը փոխել՝ հանելով «պաշտոնական» բառը:
 Կստացվեր մի բաժին, ուր, հատուկ գառավո-
 րութամբ, կգետեղվէին Արոզյանի Դորպաս
 մեկնելու պատմութիւնը ցույց տվող բոլոր
 թղթերը և գրանք կմիանային իրար հետ՝
 համապատասխան ծանոթագրութիւններով:
 Գրա մյուս առավելութիւնն էլ այն կլինէր,
 որ ծանոթագրութիւնները չէին կրկնվի ինչ-
 պես երբեք կրկնված են հիմա. բացի գրանից
 կնպաստէին չիշա ենթագրութիւններով ե-
 գած թերին լրացնելու գործին: Այդ պատճա-
 րով նույնիսկ ինքը, Ծ. Շահազիզն ընկել է
 որոշ թյուրբմացութիւնների մեջ. օրինակ,
 «Честь имею» գրութիւնն անթվական է.
 Ծ. Շահազիզն այն թվագրել է որպես 1830
 թվի ապրիլին զրգած փաստաթուղթ: Այստեղ
 տարբերվել է իշտ է, բայց ամիսը սխալ է են-
 թագրված, անա թե ինչու: Այդ երկասգով
 Արոզյանը ներկայացել է Ստրեկալովին, նշե-
 լով, որ ինքն այն պատանին է, որի մասին
 խոսել է Պարբոսը: ուսման ուղարկելու հա-
 մար: 210—211-րդ էջերում կա մի գիմում՝
 Արոզյանից՝ Պատկերին, ուր ասում է. «Ինչ-
 պես հայտնվեց ինձ... Ստրեկալովի կողմից:

Մեկը տպված է «Հայ աշուղներ»-ում
 1908 թ:

որ այն պրոֆեսորի խնդրի հետևանքով...» և այլն: Պարզ է, որ այդ դիմումը զրված է «Честь имею» երկտողից հետո, որովհետև այստեղ արդեն խոսվում է այդ երկտողի պատասխանի մասին: Իսկ Պասկևիչին տրված դիմումը զրված է «31 մարտի 1830» թվին. նկատի առնելով նաև այն, որ Արովյանը Պասկևիչին բողոքի տոնով է գրում, թե չնայած Ստրեկալովից գրական պատասխան է ստացել, «սակայն մինչև օրս էլ տակավին չեմ արժանացել այն բախտին» և այլն, ապա պիտի ընդունել, որ բավական ժամանակ էր անցել «Честь имею»-ն գրելուց հետո. դա կարող է ենթադրվել առնվազն 30—40 օր, ուստի այդ անթվակիր երկտողը պիտի զրված լիներ 1830 թվի փետրվար—մարտ ամիսներին: Եթե այդ թղթերն իրար մոտ բերված լինեին նույն բաժնի մեջ, ապա դա հեշտությամբ կնկատեր և ինքը՝ Ծ. Շահադիզը և այն չէր թվագրի որպես 1830 թվի ապրիլի գրութիւն:

Սույն հատորի թերութիւններին պիտի հաշվել շտապողականության դրոշմը, որի պատճառով հրատարակման գիտական սկզբունքները հաճախ խախտվել են, օրինակ, շատ փաստաթղթեր չեն ծանոթագրված: Նույնը կարելի է ասել նաև թարգմանութիւնների մասին. որոշ փաստաթղթեր գրաբարից թարգմանված են աշխարհաբար, իսկ հիմնական մասը՝ ոչ: Շտապողականութիւնն այնտեղ է հասել, որ տեղի է ունեցել այսպիսի գեպը. 256—257 էջերում կա մի թուղթ, որի մեջ միայն մի քանի տող է վերաբերում Արովյանին: Ծ. Շահադիզը, իրավամբ, որոշել է տպել միայն այդ մի քանի տողը՝ ասելով. «մեղ իսկապես չի հետաքրքրում բուն թղթի բովանդակութիւնը, որին ընթերցողը կարող է ծանոթանալ ինքը, մեղ միայն հետաքրքրում են թղթի մեջ Արովյանին վերաբերյալ տողերը, որ ավելորդ չենք համարում մեջ բերել»: Եվ այս բոլորից հետո տպադրված են թե այդ մի քանի տողը և թե ամբողջ թուղթը՝ առանձին-առանձին: Գա ջուրը է տալիս ոչ միայն հրատարակողի անդուշտութիւնն ու շտապողականութիւնը, այլև այն, որ խմբագիրը (Խ. Սարգսյան) կամ բոլորովին, կամ ուշադիր չի կարդացել այդ էջերը:

Նկատվում են նաև ոչ ճիշտ մեկնաբանումներ: 60—65-րդ էջերում «Ի վերայ եայրեմասիբուքան» խորագիր ունեցող թուղթը ամենայն հավանականությամբ Արովյանինը չէ: Գա կոնկրետ փաստեր պարունակող մի նամակ է, որի հեղինակը, դիմելով իր օւսուցչին, նկարագրում է իր Պետերբուրգ հաս-

նելը, բնութիւններ տալը, շորքորդ դասարան ընդունվելը, աղաչյին հանդերձներ փոխելը և այդ աղաչյին հանդերձները պահելը, Թիֆլիսեցի պարոն Խատիսովին՝ Նևսկի հրապարակում հանդիպելը և այլն և այլն: Այս փաստերն Արովյանին չեն համապատասխանում: Ուստի սխալ է այդ կոնկրետ նամակը համարել գեղարվեստական հնարանք և վերադրել Արովյանին: Դա ամենայն հավանականությամբ գրել է այն աշակերտներից մեկը, որոնց Արովյանն ուղարկել է Պետերբուրգ սովորելու (Այդպիսիներէց էր, օրինակ՝ Ստեփան Տիգրանյանը. էջ 146). հավանաբար Արովյանն ստանալով այդ նամակը՝ արտագրել է և խորագրել «Ի վերայ հայրաճառարութեան»:

260-րդ էջում Արովյանը խոսելով էջմիածնի վատաբարո հոգևորականների մասին, նշում է Հովսեփ, Ստեփաննոս, Բարսեղ և Գևորգ անունները: Հրատարակողը Ստեփաննոս արքեպիսկոպոսին նույնացրել է Ստեփաննոս Արղությանի հետ: Ծիշտ չէ, այդ Ստեփաննոսը՝ Արարատյան-հաշակերյան կոչվածն է, առանց որի չի կարելի պատկերացնել վերոհիշյալ խումբը, հատկապես Հովսեփին¹:

55—57-րդ էջերում գտնվող նամակն ուղղված է ոչ թե «Գևորգ Գեղամյանին և Գեվորգ (Ժորժ) Շահնազարյանին», այլ միայն Գ. Շահնազարյանին. հրատարակողին շփոթել է «Գևորգի ջան, Ժորժ ջան» կիսատողը. նա ուշադրութիւն չի դարձրել տողի մյուս մասի վրա «Իմ հրեշտակ, իմ հողոյ» լոյս»

¹ Այս տեսակետից առավել սխալ բացատրության ենք հանդիպում «Գիվան»-ի առաջին հատորում. «Աստ ամաչեսցին կանացի Տէր-Մարութեանք և շահատակեսցեն և պարծեսցին Սալլանդեանք, Մսուր, Առաքեալ և ալլք նոցա նմանիք» (37): Այս տողերով Արովյանն անեծքի արժան է համարում Տեր-Մարությաններին և պարծանքի արժան՝ Սալլանթյանին և մյուսներին: Այս վերջիններին հետ նա, այդ նամակը գրելու տարիներին, անսահմանորեն մտերիմ էր: Այս պատմական էջմարտությանը և Արովյանի տողերի հտակ իմաստին հակառակ՝ տրված է հետևյալ բացատրութիւնը. «Արովյանի հիշած Սալլանթյան Միքայել վարդապետը, Չմյուռնացի Մսեր կամ Մսուր դպիրն օւղպիր առաքել Արարատյանը և դրանց նմանները, որոնք պիտի ամաչեին ու պարտված լինեին»: Ո՛չ, դրանց մասին Արովյանը գրել է «և պարծեսցին». հարկավոր էր տեքստում այս «և»-ից առաջ ստորակետ դնել:

(եզակի) այդպես է նաև սկիզբը: «... ծածուկ կարգա ու կամ ճշիւր...» այդպես է այլ անգերում: «... միտքս գու ես, քունս գու ես, երազս դու ես...» և այլն: Ինչ վերաբերում է «Գեորգի ջան, Ժորժ ջան»-ին, պիտի նկատել, որ Ժորժն էլ նույն Գեորգին է: Խոսելով այս նամակի մասին, հատկապես պիտի արձանագրել նրան կցված ծանոթագրութայն ոչ միայն ռիալ, այլև Արոճյանի հասցեին հերյուրանքային լինելը: Մեկնաբանողը փոխանակ շեշտելու այդ նամակում գրանորված Արոճյանի հայրական սերը՝ իր աշակերտի նկատմամբ, նրա անձնագոհ նվիրվածութունը, նրա խորին տեսլութունը Մանգիւնովի և ուրիշների նկատմամբ, նրա սարսափը՝ Սիրիի հետ կապված, շեշտել է տալիս այնպիսի այլանշանութուն, որը չի բխում ոչ այդ նամակից և ոչ էլ Արոճյանի պայծառ կյանքից:

48-50-րդ էջերում գտնվող թուղթը շուրի տարեթվի նշում, «որի համար թուղթը մեղ մի որոշ հիմք չի տալիս» (53), — գրում է Ն. Շահագիրը: Սակայն թուղթն ունի այդ տվյալը. «... յրնթացս քսան ամաց ազատութեան հայրենեաց մերոց» (= 1847):

78-րդ էջում գրված է, որ Ալամդարյանը ներսիսյան գաղտնից հեռանալիս, բանալիները հանձնել է Գալուստ Շիրմազանյանին. զա ճիշտ չէ. այդ ժամանակ Գալուստը գեռ նորավարտ աշակերտ էր: Նրա հայր Հարություն Շիրմազանյանն էր սերտորեն կապ-

ված այդ գաղտնի վարչա-տնտեսական գործերի հետ, ուստի և նա էլ պիտի ստացած լիներ բանալիները:

Թե այս և թե նախորդ հատորի ամենամեծ թերութիւններից մեկը պիտի համարել հատուկ անունների բառարանի բացակայութիւնը, առանց որի մեծապես զժվարացված է հատուկ անուններով լեփ-լեցուն այդ հատորների ուսումնասիրութիւնը:

Վերջացնելուց առաջ նշենք մի հանգամանք ևս. գարմանալի է, որ նույն Գրականութայն Ինստիտուտը, նույն 1948 թվին, նույն Արոճյանի նույն արխիվից քաղված նույն փաստաթղթերը տպագրել է թե գրախոսվող հատորի և թե «Յաշատուր Արոճյան» ժողովածուի մեջ: Նկատի ունենք ընկ. Ռ. Զարյանի պրպտուսների արդյունքը, ուր տպագրված են այս հատորում գտնվող մի շարք փաստաթղթեր («Յնդութիւն իմ» 253—254, Գ. Շահնազարյանին ուղղված նամակը — 317—319, Ստ. Ներսիսյանի նամակը — 281—282, Ն. Նախիջևանցուհու դիմումը — 302 303, աստրախանցիների դիմումը — 312, 313 Գետերբաւրդից գրված նամակները — 272—277 և այլն):

Համեմատելով նույն աղբյուրից տպված այդ երկու տպագրութիւններից մի քանիսը, նկատեցինք աղաղակող անհամաձայնութիւններ. բերենք մի օրինակ:

Շահագիր. [«Իրվան...» 2-րդ հատոր էջ 11]

1. գիւրաքանչիւր տողի, գիւրաքանչիւր բանի, նաև գրասի
2. յօրհնութիւն
3. միթարթի[չդ]:
4. անբաժ
5. հիւսիսոյ
6. Անջինջ պահեալ գյաւիտենից յիշատակ Ձեր, կամ և մեռանիմ ի Ձեզ:
7. զիս երբեմնակի:
8. զյս ցնամատկիցն (?) Ձեզ, եվ զսրտակիցն Ձեր:
9. Անտօնեան Ապովեան:

Սա միանգամայն անհանգուրժելի երեւոյթ է: Կան նաև այլ թերութիւններ էլ, որոնց մասին չենք խոսում: Ծանկալի կլիներ, որ այդ նյութերի հե-

Ռ. Զարյան [«Ռ. Արոճյան» ժողովածուն 253—254.]

1. գիւրաքանչիւր տողն, գիւրաքանչիւր բանս նաև գրասս
2. յօրհնութիւնս
3. միթարթութիւն
4. անբաժս
5. հիւսսոյ.
6. Անջինջ պահեալ գյաւիտենից յիշատակ Ձեր, Ձիմ խորհրդարամի կամ և մեռանիմ ի Ձեզ:
7. գերբեմնակի
8. ձեզ զսրտակիցն Ձեր
9. Անտօնեան Ապովեան:

տագա հրատարակութիւնը կատարելիս, ուշադրութիւն գարձնելն այս թերութիւնների վրա և տային ավելի անթերի ու ավելի նպատակաւաց հրատարակութիւն:

ԱՍ. ՄՆԱՑԱԿԱՆՑԱՆ